Ա.Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ. Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն, *Երևան, «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշար, 2013, 208 էջ:*

Հայրենական աղվանագիտությունը հարստացավ ևս մեկ արժեքավոր աշխատությամբ, լույս տեսավ պատմական գիտությունների թեկնածու Արգիշտի Մնացականի Վարդանյանի Աղվանքի մ. թ. ա. I դարի – մ. թ. VI դարի պատմական աշխարհագրությանը նվիրված ուսումնասիրությունը, որը լուրջ ներդրում է նաև արդի կովկասագիտության բնագավառում: Մենագրությունը ձեռագիր նյութերի, հրապարակված բազմալեզու (հունա-հռոմեական, հայկական, բյուզանդական, ասորական, վրացական և այլն) սկզբնաղբյուրների ու թեմային առնչվող պատմագիտական ուսումնասիրությունների (հատկապես նորագույն) լայն օգտագործմամբ կատարված հետազոտություն է, որում հեղինակը շոշափում է գիտական ու հասարակական շրջաններում մեծ հնչեղություն ստացած Աղվանից աշխարհի պատմությանն ու աշխարհագրությանը վերաբերող առանցքային այնպիսի հարցեր, որոնք հաճախ, մասնավորապես ադրբեջանցի հեղինակների կողմից, դարձել են քաղաքական շահարկումների առարկա:



Ընդարձակ է Ա. Մ. Վարդանյանի քննարկած հարցերի շրջանակը: Այն ներառում է Աղվանից պետության կազմավորման, վերջինիս քաղաքական սահմանների, պատմական իրադարձությունների թելադրանքով դրանց փոփոխությունների, վարչական կառուցվածքի, Աղվանից մարզպանության առաջացման, տրոհման և այս ամենի հորձանուտում հայկական Ուտիք ու Արցախ նահանգների վարչա-կացության խնդիրները, հայ-աղվանական հարաբերությունները և այլն: Նշված հարցերի շուրջ քննություն կատարելիս, հետազոտողն անդրադարձել է խնդրո առարկա հարցի կապակցությամբ արտահայտված կարծիքներին և աղբյուրների տեղեկությունների անաչառ վերլուծությամբ հաստատել կամ մերժել դրանք, կատարել ճշգրտումներ: Գիտական նման մոտեցմամբ էլ նա անդրադարձել է ադրբեջանցի հեղինակների տեսակետներին և փաստացի տվյալներով բացահայտել դրանց սնանկությունը, հակագիտական ու հակապատմական բնույթը, վերհանել հարևան երկրում օրեցօր աճող հայատյաց տրամադրությունները և պատշաճ հակահարված հասցրել այդ կեղծ տեսակետների ու սնապարծ հայտարարությունների հեղինակներին:

Գրախոսվող աշխատությունը սկսվում է ներածական բաժնով, որտեղ հեղինակը հետազոտության նպատակը, խնդիրները, գործնական նշանակությունն ու արդիականությունը ներկայացնելով հանդերձ, կատարել է աշխատությունում օգտա-

գործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսական վերլուծություն, արժեքավորել դրանք, մատնանշել դրանց կարևորությունը հետազոտվող թեմայի համար: Այսպես մոտենալով յուրաքանչյուր գրավոր ստեղծագործությանը՝ Ա. Մ. Վարդանյանն առանձնահատուկ մոտեցում է ցուցաբերում «Աշխարհացոյց»-ի, իբրև իր ուսումնասիրության համար ուղենիշային սկզբնաղբյուրի, նկատմամբ: Ի մի բերելով սույն կոթողային հուշարձանի գրության ժամանակի ու հեղինակի (կամ հեղինակների) շուրջ պատմագիտության մեջ առկա տեսակետները՝ հետազոտողը դրանց համադրմամբ ու նորովի քննությամբ հաստատում է այն կարծիքը, «որ «Աշխարհացոյց»-ը գրվել է VII դարում և պատկանում է Անանիա Շիրակացու գրչին» (էջ 14):

Աշխատության մեջ քննարկվող հիմնահարցերից են Աղվանից պետության կազմավորման, նրա պետական-քաղաքական սահմանների ձևավորման, դրանց շրջագծում վերջինիս գոյատևման ու տևականության հարցերը: Առաջին գլխում հետազոտողը հայ հին և վաղ միջնադարյան ու հունա-հռոմեական հեղինակների հաղորդումների մանրախույզ քննությամբ ևս մեկ անգամ ապացուցում է, որ խնդրո առարկա պետությունը կազմավորվել է ոչ շուտ քան մ. թ. ա. I-ին դարի սկզբներին, այսինքն՝ ավելի ուշ, քան Մեծ Հայքում ու Վիրքում, և ընդգրկել է Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի հարավային ճյուղի, Կասպից ծովի, Ալազան ու Կուր գետերի միջև ընկած աշխարհագրական տարածքը: Նույն աղբյուրների վկայություններով նա միաժամանակ հիմնավորում է այն իրողությունը, որ Աղվանից պետությունը նշված սահմաններում գոյատևել է մինչև V դարի կեսերը և, ի հեճուկս աղրբեջանցի հեղինակների, ամրագրում, որ այդ ամբողջ ժամանակաշրջանում Մեծ Հայքի ու Աղվանքի միջև իբրև անփոփոխ սահմանագիծ եղել է Կուր գետը: Այնուհետև Ա. Մ. Վարդանյանը կանգ է առել հայ-հռոմեական հարաբերությունների և դրանցում աղվանցիների ունեցած մասնակցության, ապա III–V դարերում խմորվող հայ-աղվանական առնչությունների վրա և պարզորոշ ցույց տվել, որ առաջին դեպքում Աղվանքը հանդես է եկել որպես Տիգրան Մեծին հպատակ երկիր ու այդ կարգավիճակով էլ մասնակցել Տիգրանակերտի ճակատամարտին մ. թ. ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին, իսկ երկրորդ դեպքում՝ որպես Շապուհ Բ Երկարակյաց դաշնակից ու զինակից, որի հետ էլ պարտվում է հայ-պարսկական կռիվներում: Այս ժամանակ է, որ, օգտվելով Հայաստանի ժամանակավոր թուլությունից, Աղվանքի թագավոր Ուռնայրը Շապուհ Բ-ի սադրանքով, հարձակվում է Մեծ Հայքի վրա և նրանից խլում սահմանամերձ մի քանի գավառներ: Վերջիններս, սակայն, կարճ ժամանակ անց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի կորովի բազկի շնորհիվ ազատագրվում են ու վերամիավորվում մայր երկրի հետ, որով և Կուրը կրկին դառնում է սահմանային գետ:

Մենագրության մեջ առանձին բաժին է հատկացվել ուսումնասիրվող երկրի վարչական կառուցվածքին՝ աշխարհագրական բաժանումներին, գավառներին, քաղաքներին, վերջիններիս տեղադրություններին, գավառների անվանումների տարընթերցումներին, փորձ արվեց որոշել դրանց հավանական ճիշտ ձևը՝ կատարելով այլ ճշգրտումներ: Բաժինը առանձնանում է նաև հետազոտվող

նյութի խոր մշակմամբ ու հեղինակի բերած գիտական նորույթների պարունակությամբ:

Ուղեցույց ունենալով «Աշխարհացոյց»-ի ընդարձակ (Ա. Սուքրյանի հրատարակած վենետիկյան) և համառոտ (Ք. Պատկանյանի սանկտպետերբուրգյան) խմբագրությունները, դրանք բաղդատելով միմյանց ու ձեռագրերից ընտիր համարվող թիվ 582-ի տեքստի հետ, ուսումնասիրողն իր պրպտումներում հասել է զգալի հաջողությունների: Բայց մինչև բուն նպատակին անցնելը, Ա. Մ. Վարդանյանը քննության է առնում հիշյալ սկզբնաղբյուրի երկու տարբերակների հաղորդումները պարզաբանման ենթակա հարցերի մասին, վեր հանում դրանցում առկա տարբերություններն ու նմանությունները, զատում վրիպակները և, ելնելով արդյունքից, անում սեփական եզրակացությունները:

Առաջնորդվելով նման գիտահամեմատական մեթոդաբանությամբ՝ մենագրության հեղինակը պարզել է Աղվանքի գավառների իրական թիվը՝ 11, որոնք հիշատակված են «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունում, այն պարագայում, երբ ըստ համառոտ խմբագրության դրանք 12-ն են: Եվ հետազոտողը դա արել է ընդունելի մի բացատրությամբ, համաձայն որի՝ ընդարձակ տարբերակում նշված «Ոստան-ի մարզպան» գավառը, համառոտում հանդես է գալիս երեք, միմյանցից առանձին անուններով՝ «Ոստան», «Ի Մարծ», «Պանան»: Նրա արդարացի դիտարկմամբ՝ Աղվանքը երբեք «Հաբանդ» անվամբ գավառ չի ունեցել, որ սխալմամբ կարծել են որոշ ուսումնասիրողներ: Այն հետագայի ներմուծում է և Աղվանքի Համբասի գավառի անվան հետ շփոթելու արդյունք, որ թույլ են տվել արտագրողները: Շարունակելով ուսումնասիրությունը նման մեթոդաբանությամբ՝ պատմաբանը Ա. Սուքրյանի և Ք. Պատկանյան հրապարակած աշխարհացոյցային տեքստերում բացահայտում է նաև այլ թերություններ՝ պակասություններ և հավելումներ ու հույս հայտնում, որ դրանք վերացնելու և մեկը մյուսով լրացնելու դեպքում հնարավորություն կընձեռվի վերականգնել «Աշխարհացոյց»-ի նախնական բնագիրը:

Անցնելով Աղվանքի գավառների տեղադրություններին, մենագրության հեղինակը, պատշաճը հատուցելով նույն հայցով հանդես եկած նախորդ հեղինակներին՝ Մ. Բարխուդարյանին, Ս. Տ. Երեմյանին, Բ. Հ. Հարությունյանին և այլոց, նորովի քննություն է անցկացնում և համաձայնվում կամ չի համաձայնվում նրանց տեսակետների հետ: Վերջին պարագայում նա ուղղումներ է մտցնում դրանցում և առաջարկում նոր՝ սեփական քննությամբ կազմած իր հայեցակետը: Ի դեպ, նա առաջ քաշած հարցը քննության է ենթարկում այն լրջախոհ մտայնությամբ, որ որոշվող գավառի աշխարհագրական սահմանները Շիրակացու օրերի համեմատությամբ երկրամասում ծավալվող իրադարձությունների արդյունքում գրեթե միշտ փոփոխվել են՝ ընդարձակվել կամ սեղմվել: Սակայն այդ մասնակի փոփոխությունները չեն, որ նրա հետազոտության նյութ են դարձել: Ուսումնասիրողը հետևողական քննություն է անցկացնում Աղվանքի մի շարք գավառների (Եխնի, Բեխ, Կամբեճան) վարչաքաղաքական կացության շուրջ և հակադրվելով վրացի պատմաբաններին, մասնավորապես Դ. Մուսխելաշվիլուն, աղբյուրների ընձեռած տեղե-

կությունների հիման վրա անառարկելիորեն ցույց տալիս, որ դրանք Աղվանքի գավառներից են, այլ ոչ թե Վիրքի, ինչպես առանց ծանրակշիռ հիմնավորումների պնդում են նրանք:

Գրքում գավառների տեղադրությանը հաջորդում է երկրի քաղաքների, խոշոր բնակավայրերի, ամրոցների ու այլ բնակատեղիների տեղադրությունը: Այստեղ հեղինակի հիմնական աղբյուրը՝ «Աշխարհացույց»-ի կողքին, եղել է հույն աշխարհագետ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ուղեցույց» աշխատությունը, որում թվարկված են Աղվանքի 29 քաղաք: Սակայն, ինչպես ճիշտ նկատել է Ա. Մ. Վարդանյանը, դրանց զգալի մասը քաղաքներ չեն եղել նույնիսկ այն ժամանակվա հասկացությամբ, և նրանց տեղը այդպես էլ մնում է անհայտ: Ուստի, հետազոտողն անդրադառնում է հույն աշխարհագետի թվարկած այն քաղաքներին, որոնք հիշատակվում են «Աշխարհացույց»-ում և այլ սկզբնաղբյուրներում: Եվ քննության առնելով վերջիններիս հաղորդումներն ու համեմատության եզրեր տանելով դրանց շուրջ պատմական գրականության մեջ հայտնի տեսակետների հետ, հնագիտական նյութի ընդգրկմամբ, մենագրության հեղինակը որոշում է Աղվանքի քաղաքներից Կապաղակի, Շամախու և Գվգավի աշխարհագրական դիրքը, ճշտում Վարազմանավառ ամրոցի տեղը և այլն: Նա նաև քննությամբ հերքում է Ուրցեկը Վարաչան քաղաքի հետ նույնացնելու ու աղվանական քաղաք համարելու ադրբեջանցի հեղինակների կարծիքը:

Աղվանից աշխարհի հիշյալ վարչական կառուցվածքը պահպանվում է նրա միասնական պետականության գոյության ամբողջ շրջանում՝ մ. թ. ա. I դարից մինչև մ. թ. V դարի կեսերը: Այնուհետև երկրամասում ծավալված պատմական իրադարձությունները փոփոխություններ են մտցնում դրանցում: Կազմավորվում է Աղվանքի մարզպանությունն իր աշխարհագրական նոր սահմաններով ու կառուցվածքային համակարգով: Նորաստեղծ վարչաքաղաքական միավորը, սակայն, երկար չի պահպանվում: Շուրջ երկու դար անց այն տրոհվում է տարբեր մանր իշխանությունների, որոնք բարձրանալով առանձին տարածքների վրա և ստանալով նոր անվանումներ, հյուսում են իրենց պատմությունը ուրույն ընթացքով: Նշված հարցերի քննությանն է նվիրված մենագրության հաջորդ՝ երրորդ գլուխը, որը նույնպես աշխատության հաջողված մասերից է: Այս խնդիրների լուսաբանման ժամանակ էլ Ա. Մ. Վարդանյանը հավատարիմ է մնում իր սկզբունքին, լայնորեն օգտագործում է նյութին վերաբերող հայկական և օտարալեզու աղբյուրների տեղեկությունները, գրականությունը, քննում առաջ քաշված տեսակետները, հայտնում իրենը: Վերջիններիս համաձայն՝ մարզպանությունն Աղվանքում կազմավորվել է 461 թ., երբ ճնշելով ապստամբությունն Աղվանքում, արյաց արքա Պերոզը գահից հեռացնում է թագավոր Վաչե Բ-ին: Հակադրվելով այն կարծիքին, թե Աղվանքում մարզպանի պաշտոն եղել է դեռ Վաչե Բ արքայի թագավորության տարիներից, նա միանգամայն իրավացիորեն առաջ է քաշում այն միտքը, որ թագավորական կառույցների վերացումից հետո միայն հնարավոր կլիներ երկրում նոր վարչակարգ սահմանել: Մատենագրական հայտնի տվյալների խոր ուսումնասիրությամբ, հետազոտողը ճիշտ

կողմնորոշվելով անվարան միանում է ուսումնասիրողների այն խմբին, որոնց համոզմամբ Ուտիք և Արցախ նահանգները Մեծ Հայքից անջատվել ու Աղվանից մարզպետությանն են բռնակցվել նույն՝ 461 թվականին, և ոչ մի դեպքում դրանից առաջ: Հետազոտողը ճիշտ է նաև այն հարցում, որ նշված իրադարձություններից հետո է Աղվանից մարզպետության հարավային սահմանը հասնում Արաքս գետին, իսկ հայկական նահանգների վրա էլ տարածվում «Աղուանք» աշխարհագրական անվանումը:

Անդրադառնալով Աղվանից մարզպանության տրոհման խնդրին՝ Ա. Մ. Վարդանյանը դրանում տեսնում է ներքին և արտաքին մի շարք գործոններ, որոնց մեջ, այնուամենայնիվ, առաջնայինը համարում է տարածաշրջանում ամուր հաստատվելու համար Սասանյան Իրանի վարած ռազմավարական ու վարչական քաղաքականությունը:

Ա. Մ. Վարդանյանը համամիտ է այն կարծիքին, որ մարզպանության տրոհումից հետո «Աղուանք» տեղանունը դադարում է այն կազմող երկրների համար ընդհանուր անվանում լինելուց: Այսուհետ, իրավացիորեն գտնում է նա, վերջիններս սկսում են հանդես գալ «Աղուանք» աշխարհագրական եզրույթի տակ: Այս Հայոց Աղվանքն էլ Առանշահիկ հայ նախարարական տան գլխավորությամբ կազմավորվում է ինքնուրույն հայկական իշխանություն:

Գրախոսվող աշխատությունն ավարտվում է «Եզրակացություն» բաժնով, ուր ամփոփված են հետազոտության արդյունքները, Աղվանքի գավառները ըստ «Աշխարհացույց»-ի պատկերող քարտեզ, օգտագործված աղբյուրների և գրականության ու հատուկ անունների ցանկեր, որոնք ավելի են բարձրացնում ուսումնասիրության գիտական արժեքը: Չնայած մասնակի թերություններին ու վիճահարույց հարցադրումներին՝ «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարով հրատարակված սույն մենագրությունը պահանջված է արդի հայ հասարակության կողմից: Գրքի հրապարակումը ճիշտ ժամանակին է և լուրջ հակահարված է պատմության կեղծարարներին:

ՀԵՆՐԻԿ ՍՎԱՋՅԱՆ